

ԵՊ 6539



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«13» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 081 - 24

Ձեռնարկողը՝

«Լևադան» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Գ. Արագածավան,
Գրիբոյեդովի 1 նրբ., փակուղի 10

Գործունեությունը՝

Արագածավանի պեռլիտի հանքավայրի ընդլայնված
տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն
Արագածոտնի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 081 - 24
«13» հունիսի 2024թ.

Արագածավանի պեղիտի հանքավայրի ընդլայնված տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Լևադան» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արագածավան բնակավայր

Ներածական մաս. Համաձայն ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ հաշվետվություն/ «Լևադան» ՍՊԸ-ն /այսուհետ՝ ընկերություն/ նախատեսում է Արագածավանի պեղիտի հանքավայրի ընդլայնված տեղամասի արդյունահանում: Արագածավանի պեղիտների հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզում, վարչական առումով՝ Թալին համայնքի Արագածավան բնակավայրում: Մոտակա բնակավայրերը գտնվում են՝ Արագածավան՝ 2.8 կմ, Հակկո՝ 5 կմ, Կանչ՝ 5 կմ, Արտենի՝ 5.5 կմ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքից Մաստարա սելավատարը գտնվում է 2600 մ, մոտակա մշակովի հողատարածքը՝ 150 մ հեռավորության վրա են:

Հայցվող տեղամասի տարածքի հողերն ըստ նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական են, ըստ հողատեսքի՝ արոտավայր, վարելահող:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ /ՀՕ-110/ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Լեռնագրական տեսակետից հանքավայրի տարածքը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագածի լեռնազանգվածի հարավային լանջերին՝ Թալինի սարավանդի հյուսիս-արևմտյան մասերին և բնութագրվում է բլրաալիքավոր ռելիեֆով:

Թալինի սարավանդի բարձրությունը՝ 1250-1800 մ է, կազմված է նեոգենի և չորրորդականի հրաբխային ապարներից: Մակերևույթը բլրաթմբային է, թույլ մասնատված:



Արագածոտնի մարզի տարածքը, որը և Արարատյան հարթավայրում է, հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին է և հանդիսանում է Հայկական բարձրավանդակի ցածրադիր և պարփակ մասերից մեկը: Կլիման չոր է, խիստ մայրցամաքային, բնորոշվում է սառը ձմեռներով և շոգ ամառներով, ինչպես նաև արևափայլի երկարատևությամբ:

Ամռանը ջերմաստիճանի բացարձակ առավելագույնը՝ $+37.5^{\circ}\text{C}$ է, ձմռանը՝ -26.1°C : Ամսական միջին տեղումները կազմում են 10 մմ, հարաբերական խոնավությունը հաճախ լինում է 30%-ից ցածր: Տեղումների տարեկան քանակը կազմում է 200-300 մմ.:

Համաձայն հաշվետվության՝ դիտարկվող տարածքում ստորերկրյա ջրերը բացակայում են, ինչը պայմանավորված է պեռլիտային ավազների բարձր ջրաթափանցելիությամբ, որի պատճառով մթնոլորտային տեղումների հետևանքով առաջացած ջրերը ներծծվում են ապարների մեջ՝ հասնելով բավականին խորը տեղադրված ստորադիր հորիզոնները:

Համաձայն հետազոտության բուն հանքավայրի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, հազվագյուտ, վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Համաձայն ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կարծիքի՝ տարածքում պատմական և հնագիտական հուշարձանները բացակայում են:

Արդյունահանման ՇԱԹՎ-29/301 թույլտվության շրջանակներում ընկերությունը հանքարդյունահանման աշխատանքներ է իրականացնում Արագածոտնի մարզի Արագածավանի պեռլիտի հանքավայրում: Հաշվի առնելով շինարարության ոլորտում առկա պահանջարկը՝ պեռլիտի հանդեպ, ընկերության կողմից նախատեսվում է՝ ըստ խորության ընդլայնել տրամադրված ընդերքի տեղամասը՝ համապատասխանաբար մեծացնելով բացահանքի տարեկան արտադրողականությունը և թույլտվության ժամկետը՝ երկարացնել 20 տարով:

Հանքավայրը գտնվում է շահագործման փուլում, ներկա փուլում խախտված տարածքների վերականգնման աշխատանքներ չեն նախատեսվում: Հանքարդյունահանման աշխատանքների շրջանակներում բացահանքի տարածքից հեռացված մակաբացման ապարների ծավալը կազմում է 3260.0 մ^3 , այդ թվում՝ հողաբուսական շերտինը՝ 430.0 մ^3 : Նշված ապարները կուտակված են բացահանքի սահմաններում: Հանքարդյունահանման արդյունքում խախտված և չխախտված տարածքների մակերեսները համապատասխանաբար կազմում են 8.59 հա և 6.5 հա:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ ՊՊՀ-ի 16.11.1998թ-ի թիվ 52 արձանագրությամբ, հետևյալ կարգերով և քանակներով՝ B կարգով 2172.2 հազ.մ^3 , C՝ կարգով 3901.9 հազ.մ^3 , ընդամենը՝ B + C՝ կարգերով 6074.1 հազ.մ^3 :

Բացահանքի կորդինատական համակարգը ներկայացված է ARM WGS 84-ով.

1. $Y = 8389211.0$ $X = 4467510.0$
 2. $Y = 8389234.0$ $X = 4468128.0$
 3. $Y = 8389518.0$ $X = 4468107.0$
 4. $Y = 8389508.0$ $X = 4467678.0$
- S = 15.09 հա

Հայցվող տեղամասի արդյունահանման համար առկա են բոլոր ենթակառուցվածքները, մոտեցող ավտոճանապարհը, հանքարդյունահանման համար անհրաժեշտ տեխնիկան:

Հանքավայրը ժամանակին արդյունահանվել է, դիտարկումներից պարզվել է, որ արդյունահանումը կրել է ընտրողական բնույթ, արդյունահանվել են հանքավայրի այն



հատվածները, որտեղից հնարավոր է եղել առանց լուրջ նախապատրաստական աշխատանքների արդյունահանել օգտակար հանածո: Քանի որ բացահանքային դաշտը բացված է, անհրաժեշտ ենթակառուցվածքները ստեղծված են, ուստի լեռնակապիտալ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը բացակայում է:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից ելնելով նախատեսվում է տեղամասի մշակումը կատարել բաց եղանակով, միակողմանի խորացող (վերևից- ներքև) մշակման համակարգով, էքսկավատորային հանույթով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման:

Նախագծված բացահանքի պարամետրերն են՝

- առավելագույն երկարությունը - 608.0 մ,
- առավելագույն լայնությունը - 338.0 մ,
- մշակման խորությունը - 90.0 մ,
- օտարման տարածքը - 15.09 հա:

Բացահանքի վերջնական եզրագծում ընդգրկվել է 4845.915 հազ.մ³ ծավալի օգտակար հանածո, այդ թվում՝ B կարգով՝ 944.915 հազ.մ³, C₁ կարգով՝ 3901.0 հազ.մ³: Մակաբացման ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 138800.0 հազ.մ³, մակաբացման միջին գործակիցը կազմում է 0.0035 մ³/մ³: Հանքավայրի պաշարները հաստատված են մինչև 1200 մ հորիզոնը:

Նախագծով նախատեսվում է տեղամասի շահագործում միակողմանի՝ վերևից ներքև խորացումով մշակման համակարգով, առանց հորատապայթեցման աշխատանքների, էքսկավատորային հանույթով:

Հանքավայրի արդյունահանման ժամանակ, պայմանավորված հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով, առաջանալու են օգտակար հանածոյի 920724.0 մ³ ընդհանուր ծավալով կամ 19% կորուստներ:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է՝ ըստ մարվող զանգվածի՝ 242296.0 մ³, ըստ արդյունահանվող զանգվածի՝ 196260.0 մ³:


Նախատեսվում է բացահանքում լեռնային աշխատանքները կատարել շուրջ տարվա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը տարվա մեջ ընդունվել է 260 օր, օրական մեկ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով:

Բացահանքի մշակման համակարգի պարամետրերն են՝

- աստիճանի բարձրությունը - 5 մ,
- աստիճանի թեքման անկյունը (աշխատանքային) - 70-75⁰,
- աստիճանի թեքման անկյունը (մարված) - 60-65⁰,
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը - 20 մ,
- անվտանգության բերմայի լայնությունը - 1.5 մ:

Համաձայն հաշվետվության՝ մակաբացման ապարները բուլդոզերի օգնությամբ կուտակվելու են հանքաստիճանից 15-20 մ հեռավորության վրա՝ արտաքին լցակայանում, բացահանքի արևմտյան թևի հարևանությամբ:

Հերթափոխում նշված ապարների ծավալը կազմում է 27.2 մ³/հերթափոխ, դրանց տեղափոխումն իրականացվում է պարբերաբար, բուլդոզեր-էքսկավատորավորինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով: Մակաբացման ապարները ու հողախառը պեռլիտները պահեստավորում են միասին, հողաբուսական շերտի ապարներից առանձին: Շահագործման 1-12 տարիներին մակաբացման ապարները տեղափոխվելու են դեպի ժամանակավոր արտաքին լցակայաններ, որից հետո կիրականացվի արտաքին լցակայանառաջացում: Լցակայանների զբաղեցրած տարածքը կազմում է՝ մակաբացման ապարներինը՝ 1.63 հա, հողաբուսական շերտինը՝ 0.3 հա,



լցակույտերի նախատեսվող բարձրությունները՝ 5 մ: Հողաբուսական շերտի ապարների ընդհանուր ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 18192.0 մ³, որի հեռացումը և հետագա պահպանումը բացահանքի տարածքից կատարվելու է ՀՀ կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 8-ի թիվ 1396-Ն և 2017թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Պեղիտի տեղափոխումը բացահանքից կատարվելու են ընկերության HOWO կամ KRAZ մակնիշի ավտոինքնաթափերով՝ 2 կմ հեռավորության վրա գտնվող ընկերության գործարան:

Շահագործմանը զուգահեռ, երբ 1200 մ հորիզոնում կառաջանան շահագործված տարածքներ, մակաբացման ապարները կսկսվեն պահեստավորվել դրանցում, միաժամանակ կիրականացվի ռեկուլտիվացիա՝ մշակված տարածքներ կտեղափոխվեն լցակույտի ապարները: Ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում շահագործված տարածքներում բուլդոզերով նախ փռվելու և հարթեցվելու են մակաբացման ապարները, ապա դրանց վրա հողաբուսական շերտի ապարները: Նշված աշխատանքների շրջանակներում հարթեցվելու է նաև արտադրական հրապարակի, սպասարկող ճանապարհների տարածքը, բացահանքի հանքաաստիճանները բերվելու են անվտանգ վիճակի: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր տարածքը կազմելու է 17.5 հա: Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսվում է 6687.6 հազար ՀՀ դրամ:

Համաձայն նախագծի բացահանքի մշակման ժամկետը 20 տարի է, աշխատանքային ռեժիմը շուրջտարյա 260 օր, միահերթ, հնգօրյա աշխատանքային շաբաթով:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 250.0 ՀՀ հազ.դրամ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են նաև բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված յուղեր (1.19 տ/տարի/ և դիզելային յուղերի մնացորդներ (0.9 տ/տարի): Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար,

- բանեցված կապարե կուտակիչները և խոտանը՝ (50կգ/տարի) հավաքվելու են նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին պայմանագրային հիմունքներով վաճառելու համար,

- պինդ կենցաղային թափոնները (կենցաղային աղբ), կուտակվելու են տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու են մոտակա աղբահավաք կետեր:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու (75.66 մ³/տարի) և տեխնիկական (780.0 մ³) նպատակներով: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների, արտադրական հրապարակների, լցակույտերի՝ 5210 մ² մակերեսով ընդհանուր տարածքների փոշենստեցման համար:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ ընկերությանը տրամադրվել է ջրօգտագործման թիվ 0319-21 թույլտվությունը՝ 1 գործող խորքային հորի օգտագործման իրավունքով: Բացահանքի կարիքների համար օգտագործվելու է տվյալ խորքային հորի ջուրը:



Իսմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ Թալին համայնքից: Կենցաղային կեղտաջրերը օրական 0.25 մ³ քանակությամբ հավաքվելու են բետոնային լցարանում, որը տեղափոխվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից: Համաձայն նախագծի՝ հանքավայրի բաց եղանակով շահագործման ժամանակ արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու:

Հաշվետվությունում ներառված է գրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Համաձայն հաշվետվության՝ հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու արդյունահանման, լեռնակապիտալ աշխատանքների, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, դիզելային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, ածխաջրածիններ: Համաձայն գնահատման հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («Էկո ցենտր» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով ճանապարհների, լցակայանների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրը 3 անգամ,
- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,
- տեխնիկական միջոցների սպասարկում՝ նախապես որոշված սպասարկման կետերում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում՝ բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանաճոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,
- ՀՀ կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,
 - աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Արդյունահանման աշխատանքները կատարվելու են բաց լեռնային եղանակով,



հիմնականում օգտագործվում են գոյություն ունեցող ճանապարհները, ենթակառուցվածքները, ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Արդյունահանման տարածքներում կենսաբազմազանության բացակայությունը պայմանավորված է արդեն հանքավայրի արդյունահանման աշխատանքների առկայության հետ:

Շահագործման ընթացքում՝ օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Հաշվետվությունում ներկայացված միջոցառումների, մշտադիտարկումների իրականացման արդյունքում, վերահսկելի և կառավարելի կլինեն օդային ավազանն աղտոտող վնասակար նյութերի քանակները և աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Նախատեսվող գործունեության համար գործող նորմերով ապահովված է սանիտարապաշտպան գոտու պահանջվող չափը:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը, «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի դրական կարծիքը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննության բոլոր փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը պետք է տրամադրվի պետական մարմիններին և համապատասխան պահանջի դեպքում՝ հանրությանը:
- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները:
- Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվաղողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ապահովել հաշվետվությամբ ամրագրված ռեկուլտիվացիայի, հանքի փակման միջոցառումների իրականացումը:



- Պարբերաբար իրականացնել մոնիթորինգ՝ առաջնորդվելով 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն ՀՀ կառավարության որոշման պահանջներով:
- Գործունեության ընթացքում առաջացող բուսահողը պահպանել Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բացառելով բուսահողի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմինն: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Լևադան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածավանի պեոլիտի հանքավայրի ընդլայնված տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան